ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. սահմանված ձևի ընդունելության քննության մասնակցության դիմում.
2. սահմանված ձևի ինքնակենսագրական տվյալների թերթիկ.
3. անձը հաստատող փաստաթղթի պատճենը ***(անհրաժեշտ է ներկայացնել նաև անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, որն ուսումնասիրվելուց անմիջապես հետո վերադարձվելու է դիմորդին).***
4. 3x4 չափի լուսանկար.
5. բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի, վկայագրի) պատճենը ***(անհրաժեշտ է ներկայացնել նաև բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի, վկայագրի) բնօրինակը, որը ուսումնասիրվելուց անմիջապես հետո վերադարձվելու է դիմորդին),*** **<u>կամ</u>** բուհից տրված տեղեկանքի բնօրինակը ((ընդ որում՝ տեղեկանքի բնօրինակը ներկայացնելու դեպքում դիմորդը պարտավոր է ոչ ուշ, քան ուսումնառության ավարտը Հանձնաժողովին ներկայացնել դիպլոմի պատճենը):
   Եթե դիմորդի բարձրագույն իրավաբանական կրթություն ստանալը հավաստվում է օտարերկրյա պետությունում տրված ավարտական փաստաթղթով, ապա նշված փաստաթղթի հետ դիմորդը Հանձնաժողովին պետք է ներկայացնի նաև ստացած կրթության ճանաչումն ու համարժեքությունը հավաստող իրավասու մարմնի կողմից տրված հայերեն լեզվով փաստաթուղթը).
6. ընդունելության քննության մասնակցության վճարի անդորրագրի պատճենը **<u>կամ</u>** վճարից ազատվելու մասին դիմում.
7. դատվածության վերաբերյալ տեղեկանքը **<u>կամ</u>** նշված տեղեկանքը ստանալու մասին լիազորագիրը:

8. **<u>Հեռավար դիմորդի դեպքում նաև</u>**՝ տեղեկանք առ այն, որ հեռավար դիմորդը վերջին մեկ տարին, այդ թվում՝ դիմելու պահին, Երևան քաղաքից առնվազն 70 (յոթանասուն) կմ հեռավորության վրա է փաստացի բնակվում (եթե հաշվառման հասցեն տարբերվում է փաստացի բնակության վայրի հասցեից).
9. **<u>Հատուկ դիմորդի դեպքում նաև ստորև նշված փաստաթղթերից մեկը</u>**՝

- առնվազն 5 (հինգ) տարվա փաստաբանի, դատախազի, քննիչի, դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան աշխատանքային (մասնագիտական) ստաժն է.
- իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը, եթե հատուկ դիմորդի կարգավիճակի հիմքը համապատասխան գիտական աստիճանն է, ինչպես նաև առնվազն 5 (հինգ) տարվա աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթղթի պատճենը.